

ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՈՒՅՈՒՆ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՒԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL ՄԱՅՐ ՏԱՆՏԱՐ

ԿԻՐԱԿԻ 31 Մարտ 2019

104

DIMANCHE, 31 Mars



ԴԱՏԱԴՈՐԻ ԿԻՐԱԿԻ

615 stgregorychurch@gmail.co Quebec, Canada H2V 3H2
secretary@saintgregory.ca | www.saintgregory.ca

**ԴԱՏԱԴՈՐԻ ԿԻՐԱԿԻ
LE JUGE**

Աստուածաշունչի Ընթերցումներ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵՈՒԹԵՆԵՆ

65. 8- 25

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ

ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԵՆ

3. 1- 4. 9

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԵՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

17. 20- 18.14

Les lectures de la Bible d'aujourd'hui :

Philippiens 3.1-4.9

Luc 17. 20- 18.1

**Պատարագիչ՝ Յոզեֆ Յովիլ
ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ**

Célébrant: Prêtre Paroissial

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Առաւօտեան ժամերգութիւն 9:30-ին

Office Matines à 9 :30

Ս. Պատարագ ժամը 10:30-ին

La Sainte Messe à 10:30

Յոգեհանգստեան Պաշտօն կեսօրին

Office de Requieme à Midi

Deacons - Acolytes

Choirmaster: Mr. Sarkis Barsemian

Organists: Mr. Karen Manucharyan

Mrs. Hourı Bedrossian

ԿԻՐԱԿՆՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՓԻԼԻՊՊԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾՆԱՄԱԿԷՆ 3. 1- 4. 9

Ասկէ ետքը, եղբա՛յրներս, ուրախ եղէք Տէրոջմով: Նոյն բաները ձեզի գրել ինձի ձանձրութիւն չէ, բայց ձեզի ապահովութիւն է: Զգուշացէ՛ք շուններէն, զգուշացէ՛ք չար մշակներէն, զգուշացէ՛ք թլփատութենէն, Վասն զի թլփատութիւնը մենք ենք, որ հոգիով Աստուած կը պաշտենք ու կը պարծենանք Քրիստոս Յիսուսով եւ մարմնի վրայ չէ վստահութիւննիս: Թէպէտ ես ալ նոյն վստահութիւնը ունիմ մարմնի վրայ: Եթէ ուրիշ մէկը կը կարծէ թէ վստահութիւն ունի մարմնի վրայ, ա՛լ աւելի ես. Ութը օրուան թլփատուած, Իսրայէլի ազգէն, Բենիամինի ցեղէն, Եբրայեցի՝ Եբրայեցիներէն, օրէնքին նայելով՝ փարիսեցի. Նախանձախնդիր ըլլալու կողմանէ՝ եկեղեցին կը հալածէի. օրէնքին արդարութեանը կողմանէ՝ անարատ էի: Բայց ինչ որ ինձի շահ էր, զանհկա Քրիստոսին համար վնաս սեպեցի: Եւ իրաւ բոլոր բաներն ալ վնաս կը սեպեմ իմ Տէրոջս Քրիստոս Յիսուսին գերազանց գիտութեանը համար. որուն համար ամէն բանէ զրկուեցայ եւ աղտեղութիւն կը սեպեմ, որպէս զի Քրիստոսը շահիմ Ու իր մէջ գտնուիմ, ո՛չ թէ իմ արդարութիւնս ունենամ՝ որ օրէնքէն է, հապա Քրիստոսին հաւատքովը եղած արդարութիւնը՝ որ Աստուծմէն է հաւատքով: Որպէս զի ճանչնամ զանհկա եւ անոր յարութեանը զօրութիւնը ու անոր չարչարանքներուն հաղորդ ըլլամ, անոր մահուան կերպարանքը առնելով. Որպէս զի մեռելներուն յարութեանը հասնիմ:

Ոչ թէ ես արդէն առեր եմ, կամ արդէն կատարեալ եղեր եմ, հապա ետեւէն ինկած եմ որ բռնեմ մրցանակը, որուն համար ալ բռնուեցայ Քրիստոս Յիսուսէն: Եղբա՛յրներ, ես չեմ սեպեր թէ բռներ եմ: Բայց յիշեցնեմ թէ ետեւի եղածները մոռցած եմ ու առջեւի եղածներուն կը դիմեմ. Նպատակը դիտելով՝ դէպի Քրիստոս Յիսուսով եղած Աստուծոյ վերին կոչումին մրցանակին կը վազեմ: Ուստի մենք ամէնքս՝ որ կատարեալ ենք՝ ասիկա խորհիւնք եւ եթէ բան մը ուրիշ կերպով խորհելու ըլլաք, զայն ալ Աստուած ձեզի պիտի յայտնէ: Միայն թէ ի՛նչ աստիճանի որ հասեր ենք նոյն կանոնին համեմատ քալենք, նոյն

խորհուրդը ունենանք: Ինձի նմանող եղէ՛ք, եղբայրներ ու նա-յեցեք անոնց որ այնպես կը քալեն, ինչպէս որ մեզ ձեզի օրինակ ու-նիք: Վասն զի շատեր կը քալեն, որոնց համար շատ անգամ ձեզի կ'ըսէի եւ հիմա լալով ալ կը խօսիմ, այսինքն Քրիստոսին խաչին թշնամիներուն համար. Որոնց վերջը կորուստ է, որոնց աստուածը իրենց որովայնն է ու անոնց փառքը իրենց ամօթն է, որոնք միայն երկրաւոր բաներուն վրայ կը մտածեն: Բայց մեր քաղաքականութիւնը երկինքն է, ուրկէ կը սպասենք Փրկչին, Տէր Յիսուս Քրիստոսին, Որ պիտի նորոգէ մեր խոնարհ մարմինը՝ իր փառաւոր մարմնին կերպարանակից ըլլալու, այն զօրութիւնովը որ կարող է ամէնքը իրեն հնազանդեցնել:

Իմ սիրելի ու բաղձալի եղբայրներս, իմ ուրախութիւնս ու պսակս, այսպէս հաստատո՞ւն կեցեք Տէրոջմով, սի՛րելիներս:

Եւոդիային կ'աղաչեմ ու Միւնտիքին կ'աղաչեմ, որ միեւնոյն խորհուրդը ունենան Տէրոջմով: Իրաւ քեզի՛ ալ կ'աղաչեմ, իմ հարազատ լծակիցս, դո՛ւն ալ օգնական եղիր անոնց, որոնք ինձի հետ աշխատեցան աւետարանին մէջ Կղեմէսին եւ միւս գործակիցներուս հետ, որոնց անունները կենաց գրքին մէջ են: Ուրախ եղեք Տէրոջմով ամէն ատեն. դարձեալ կ'ըսեմ, ուրա՛խ եղեք: Ձեր քաղցրութիւնը ամէն մարդու թող յայտնի ըլլայ. Տէրը մօտ է: Բանի մը համար հոգ մի՛ ընէք, հապա ամէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով, գոհութիւնով մեկտեղ, ձեր խնդրանքը Աստուծոյ յայտնի ըլլայ: Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն մտքէ վեր է, ձեր սրտերը ու մտքերը Յիսուս Քրիստոսով պիտի պահպանէ: Վերջապէս, եղբայրներ ռ, ինչ որ ճշմարտութիւնով է, ինչ որ պարկեշտութիւնով, ինչ որ արդարութիւնով, ինչ որ մաքրութիւնով, ինչ որ սիրով, ինչ որ բարի համբաւով, ինչ առաքի-նութիւն եւ ինչ գովութիւն որ կայ, անոնց մասին խորհեցեք: Ինչ որ ստրվեցաք ու առիք եւ լսեցիք ու տեսաք իմ վրաս, զա՛յն ըրէք եւ խաղաղութեան Աստուածը ձեզի հետ պիտի ըլլայ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

17. 20- 18.14

Երբ փարիսեցիները իրեն հարցուցին՝ «Աստուծոյ թագաւորութիւնը ե՞րբ պիտի գայ», պատասխան տուաւ անոնց ու ըսաւ. «Աստուծոյ թագաւորութիւնը դրսէն երեւցած բաներով չի գար: Օր մըն ալ պիտի չըսեն թէ 'Ահա հոս է', կամ 'Ահա՛ հոն', վասն զի Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսիդին է»:

Աշակերտներուն ալ ըսաւ. «Օրեր պիտի գան երբ դուք Որդի մարդոյ օրերէն մէկը տեսնելու պիտի փափաքիք ու պիտի չտեսնէք: Եւ եթէ ըսեն ձեզի թէ 'Ահա հոս է', կամ 'Ահա՛ հոն', մի՛ երթաք ու անոնց մի՛ հետեւիք: Վասն զի ինչպէս փայլակը երկնքին տակ մէկ դիէն փայլատակելով՝ մինչեւ երկնքի տակ միւս դին լոյս կու տայ, նոյնպէս պիտի ըլլայ Որդին մարդոյ իր գալուն օրը: Միայն թէ պէտք է որ ինք առաջ չարչարանքներ կրէ ու մերժուի այս ազգէն. Ինչպէս Նոյին օրերը եղաւ, այնպէս պիտի ըլլայ Որդի մարդոյ օրերն ալ: Կ'ուտէին, կը խմէին, կին կ'առնէին, երկան կը տրուէին, մինչեւ այն օրը՝ որ Նոյ տապանը մտաւ եւ ջրհեղեղը եկաւ ու ամէնքը կորսնցուց: Նմանապէս՝ ինչպէս Ղովտին օրերը եղաւ: Կ'ուտէին, կը խմէին, ծախու կ'առնէին, կը ծախէին, կը տնկէին, կը շինէին. Բայց այն օրը երբ Ղովտ Սողոմէն ելաւ, երկնքէն կրակ ու ձոռուք տեղաց եւ բոլորն ալ կորսնցուց: Նոյնպէս պիտի ըլլայ այն օրը, երբ Որդին մարդոյ յայտնուի: Այն օրը ան որ տանիքին վրայ է եւ իր կարասիները տանը մէջ, թող վար չիջնէ զանոնք առնելու եւ ան որ արտին մէջ է, նոյնպէս թող ետ չդառնայ: Մտքերնիդ բերէք Ղովտին կինը: Ով որ իր կեանքը կ'ուզէ ապրեցնել՝ պիտի կորսնցնէ զանիկա եւ ով որ կը կորսնցնէ՝ պիտի ապրեցնէ զանիկա: Ձեզի կ'ըսեմ. 'Այն գիշերը եթէ երկու հոգի մէկ անկողնի մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի. Եւ եթէ երկու կին մէկտեղ աղալու ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի. Եւ եթէ երկու հոգի արտի մը մէջ ըլլան, մէկը պիտի առնուի ու միւսը ձգուի': Պատասխան տալով՝ ըսին անոր. «Տէ՛ր, ո՛ւր պիտի ըլլայ այս բանը»: Ան ալ ըսաւ անոնց. «Ուր մարմին կայ, հոն պիտի ժողովուին արծիւները»:

Անոնց առակ մըն ալ ըսաւ այս բանին վրայով՝ թէ պէտք է ամէն ատեն աղօթք ընել ու չձանձրանալ: Ըսաւ. «Դատաւոր մը կար քաղաքի մը մէջ, որ Աստուծմէ չէր վախնար ու մարդէ չէր ամչնար: Եւ նոյն քաղաքին մէջ որբեւայրի մըն ալ կար, որ անոր կու գար ու կ'ըսէր. 'Իրաւունք ըրէ ինձի ու ազատէ զիս իմ ոսոխէս': Ժամանակ մը դատաւորը չէր ուզեր անոր մտիկ ընել. բայց ետքը ըսաւ իր մտքին մէջ. 'Թէ եւ Աստուծմէ չեմ վախնար ու մարդէ չեմ ամչնար, Գոնէ այս որբեւայրիին՝ զիս ձանձրացնելուն համար՝ իրեն իրաւունք ընեմ, որպէս զի չգայ ամէն ատեն ինձի թախանձէ': Տէրը ըսաւ. «Լսեցէ՛ք, անիրաւ դատաւորը ի՞նչ կ'ըսէ: Հապա Աստուած իր ընտրեալներուն իրաւունք պիտի չընէ՞, որոնք ցորեկ ու գիշեր իրեն կ'աղաղակեն, թէ եւ երկայնամիտ ալ ըլլայ: Ձեզի կ'ըսեմ թէ շուտով անոնց իրաւունք պի-

տի ընէ, բայց Որդին մարդոյ երբ գայ, արդեօք հաւատք պիտի գտնե՞ր երկրի վրայ»:

Մէկ քանիներուն՝ որոնք իրենց անձերուն վրայ կը վստահէին՝ թէ արդար են եւ ուրիշները կ'անարգէին՝ այս առակը ըսաւ. «Երկու մարդ գացին տաճարը՝ աղօթք ընելու: Մէկը փարիսեցի ու միւսը՝ մաքսաւոր: Փարիսեցին կայներ էր ու առանձին այսպէս աղօթք կ'ընէր. 'Ով Աստուած, շնորհակալ եմ քեզմէ, որ ուրիշ մարդոց պէս չեմ, յափշտակող, անիրաւ, շնացող եւ կամ այս մաքսաւորին պէս, Հապա շարաթը երկու անգամ ծով կը պահեմ ու բոլոր ստացուածքիս տասանորդը կու տամ': Իսկ մաքսաւորը հեռուն կայներ էր ու չէր ուզեր աչքն ալ երկինք վերցնել, հապա իր կուրծքը ձեծելով կ'ըսէր. 'Ա՛ստուած, ողորմէ ինձի՝ մեղաւորիս': Ձեզի կ'ըսեմ թէ ասիկա այն միւսէն ավելի արդարացած իր տունը գնաց, վասն զի ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհուի եւ ով որ իր անձը կը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ»:

PHILIPPIENS

3.1-4.9

Au reste, mes frères, réjouissez-vous-en [notre] Seigneur. Il ne m'est point fâcheux, et c'est votre sûreté, que je vous écrive les mêmes choses.

Prenez garde aux Chiens; prenez garde aux mauvais Ouvriers; prenez garde à la Circoncision. Car c'est nous qui sommes la Circoncision, [nous] qui servons Dieu en esprit, et qui nous glorifions en Jésus-Christ, et qui n'avons point de confiance en la chair; Quoi que je ne pourrais bien aussi avoir confiance en la chair; même si quelqu'un estime qu'il a de quoi se confier en la chair, j'en ai encore davantage; [Moi] qui ai été circoncis le huitième jour, qui suis de la race d'Israël, de la Tribu de Benjamin, Hébreu, né d'Hébreux, Pharisien de religion : Quant au zèle, persécutant l'Eglise; et quant à la justice qui est de la Loi, étant sans reproche, Mais ce qui m'était un gain, je l'ai regardé comme m'étant nuisible et cela pour l'amour de Christ. Et certes, je regarde toutes les autres choses comme m'étant nuisibles en comparaison de l'excellence de la connaissance de Jésus-Christ mon Seigneur, pour l'amour duquel je me suis privé de toutes ces choses, et je les estime comme du fumier, afin que je gagne Christ; Et que je sois trouvé en lui, ayant non point ma justice qui est de la Loi, mais celle qui est par la foi en Christ, [c'est à dire], la justice qui est de Dieu par la foi; [Pour] connaître Jésus-Christ, et la vertu de sa résurrection, et la communion de ses afflictions, étant rendu conforme à sa mort; [Essayant] si en quelque manière je puis parvenir à la résurrection des morts.

Non que j'aie déjà atteint [le but], ou que je sois déjà rendu accompli : mais je poursuis [ce but] pour tâcher d'y parvenir, c'est pourquoi aussi j'ai été pris par Jésus-Christ. Mes frères, pour moi, je ne me persuade pas d'avoir atteint [le but]; Mais [je fais] une chose, [c'est qu'en] oubliant les choses qui sont derrière [moi], et m'avançant vers celles qui sont devant [moi], je cours vers le but, [savoir] au prix de la céleste vocation, [qui est] de Dieu en Jésus-Christ; C'est pourquoi, nous tous qui sommes parfaits ayons ce même sentiment; et si en quelque chose vous avez un autre sentiment, Dieu vous le révélera aussi. Cependant marchons suivant une même règle pour les choses auxquelles nous sommes parvenus, et ayons un même sentiment.

Soyez tous ensemble mes imitateurs, mes frères, et considérez ceux qui marchent comme vous nous avez pour modèle. Car il y en a plusieurs qui marchent d'une [telle manière], que je vous ai souvent dit, et maintenant je vous le dis encore en pleurant, qu'ils sont ennemis de la croix de Christ; Desquels la fin est la perte, desquels le Dieu est le ventre, et desquels la gloire est dans leur confusion, n'ayant d'affection que pour les choses de la terre. Mais pour nous, notre bourgeoisie est dans les Cieux, d'où aussi nous attendons le Sauveur, le Seigneur Jésus-Christ; Qui transformera notre corps vil, afin qu'il soit rendu conforme à son corps glorieux, selon cette efficace par laquelle il peut même s'assujettir toutes choses.

C'est pourquoi, mes très chers frères que j'aime tendrement, vous qui êtes ma joie et ma couronne, demeurez ainsi fermes en notre Seigneur, mes bien-aimés.

Je prie Evodie, et je prie aussi Syntiche, d'avoir un même sentiment au Seigneur. Je te prie aussi, toi mon vrai compagnon, aide-leur, comme à celles qui ont combattu avec moi dans l'Évangile, avec Clément, et mes autres compagnons d'œuvre, dont les noms [sont écrits] au Livre de vie.

Réjouissez-vous en [notre] Seigneur; je vous le dis encore, réjouissez-vous. Que votre douceur soit connue de tous les hommes. Le Seigneur est près. Ne vous inquiétez de rien, mais en toutes choses présentez vos demandes à Dieu par des prières et des supplications, avec des actions de grâces. Et la paix de Dieu, laquelle surpasse toute intelligence, gardera vos cœurs et vos sentiments en Jésus-Christ.

Au reste, mes frères, que toutes les choses qui sont véritables, toutes les choses qui sont vénérables, toutes les choses qui sont justes, toutes les choses qui sont pures, toutes les choses qui sont aimables, toutes les choses qui sont de bonne renommée, [toutes] celles où il y a quelque vertu et quelque louange, pensez à ces choses; [Car] aussi vous les avez apprises, reçues, entendues et vues en moi. Faites ces choses, et le Dieu de paix sera avec vous.

LUC
17.20-18.14

Or étant interrogé par les Pharisiens, quand viendrait le Règne de Dieu; il répondit, et leur dit : le Règne de Dieu ne viendra point avec apparence. Et on ne dira point : voici, il est ici; ou voilà, il est là; car voici, le Règne de Dieu est au-dedans de vous.

Il dit aussi à ses Disciples : les jours viendront que vous désirerez de voir un des jours du Fils de l'homme, mais vous ne [le] verrez point. Et l'on vous dira : voici, il est ici; ou voilà, il est là; [mais] n'y allez point, et ne les suivez point. Car comme l'éclair brille de l'un des côtés de dessous le ciel, et reluit jusques à l'autre qui est sous le ciel, tel sera aussi le Fils de l'homme en son jour. Mais il faut premièrement qu'il souffre beaucoup, et qu'il soit rejeté par cette nation. Et comme il arriva aux jours de Noé, il arrivera de même aux jours du Fils de l'homme. On mangeait et on buvait; on prenait et on donnait des femmes en mariage jusqu'au jour que Noé entra dans l'Arche; et le déluge vint qui les fit tous périr. Il arriva aussi la même chose aux jours de Lot : on mangeait, on buvait, on achetait, on vendait, on plantait et on bâtissait; Mais au jour que Lot sortit de Sodome, il plut du feu et du soufre du ciel, qui les fit tous périr. Il en sera de même au jour que le Fils de l'homme sera manifesté. En ce jour-là que celui qui sera sur la maison, et qui aura son ménage dans la maison, ne descende point pour l'emporter; et que celui qui sera aux champs, ne retourne point non plus à ce qui est demeuré en arrière. Souvenez-vous de la femme de Lot. Quiconque cherchera à sauver sa vie, la perdra; et quiconque la perdra, la vivifiera. Je vous dis, qu'en cette nuit-là deux seront dans un même lit : l'un sera pris, et l'autre laissé. Il y aura deux [femmes] qui moudront ensemble : l'une sera prise, et l'autre laissée. Deux seront aux champs : l'un sera pris, et l'autre laissé. Et eux répondant lui dirent : où [sera-ce] Seigneur? et il leur dit : en quelque lieu que sera le corps [mort], là aussi s'assembleront les aigles.

Il leur proposa aussi une parabole, [pour faire voir] qu'il faut toujours prier, et ne se lasser point; Disant : Il y avait dans une ville un juge, qui ne craignait point Dieu, et qui ne respectait personne. Et dans la même ville il y avait une veuve, qui l'allait souvent trouver, et lui dire : fais-moi justice de ma partie adverse. Pendant longtemps il n'en voulut rien faire. Mais après cela il dit en lui-même : quoique je ne craigne point Dieu, et que je ne respecte personne, Néanmoins, parce que cette veuve me donne de la peine, je lui ferai justice, de peur qu'elle ne vienne perpétuellement me rompre la tête. Et le Seigneur dit : écoutez ce que dit le juge inique. Et Dieu ne vengera-t-il point ses élus qui crient à lui jour et nuit, quoiqu'il diffère de s'irriter pour l'amour d'eux? Je vous dis que bientôt il les

vengera. Mais quand le Fils de l'homme viendra, [pensez-vous] qu'il trouve de la foi sur la terre.

Il dit aussi cette parabole à quelques-uns qui se confiaient en eux-mêmes d'être justes, et qui tenaient les autres pour rien. Deux hommes montèrent au Temple pour prier, l'un Pharisien; et l'autre, péager. Le Pharisien se tenant à l'écart priait en lui-même en ces termes : ô Dieu! je te rends grâces de ce que je ne suis point comme le reste des hommes, [qui sont] ravisseurs, injustes, adultères, ni même comme ce péager. Je jeûne deux fois la semaine, [et] je donne la dîme de tout ce que je possède. Mais le péager se tenant loin, n'osait pas même lever les yeux vers le ciel, mais frappait sa poitrine, en disant : ô Dieu! sois apaisé envers moi qui suis pécheur! Je vous dis que celui-ci descendit en sa maison justifié, plutôt que l'autre; car quiconque s'élève, sera abaissé, et quiconque s'abaisse, sera élevé.

Եկեղեցական Տօնացոյց Յառաջիկայ Շաբթուան

Ապրիլ – Avril

1, Երկուշաբթի – ԻԹ. Օր Մեծի Պահոց
Lundi 1 – 29ème jour du Jeûne du Carême

2, Երեքշաբթի – Լ. Օր Մեծի Պահոց
Mardi 2 - 30ème jour du Jeûne du Carême

3, Չորեքշաբթի – ԼԱ. Օր Մեծի Պահոց
Mercredi 3 - 31ème jour du Jeûne du Carême

4, Հինգշաբթի – ԼԲ. Օր Մեծի Պահոց
Jeudi 4 – 32ème jour du Jeûne du Carême

5, Ուրբաթ - ԼԳ. Օր Մեծի Պահոց
Vendredi 5 - 33ème jour du Jeûne du Carême

6, Շաբաթ – ԼԴ. Օր Մեծի Պահոց
Տօն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ,
յիշատակ չարչարանցն եւ մտանելոյն ի Վիրապն:

Samedi 6 – 34ème jour du Jeûne du Carême
Fête de Saint Grégoire L'Illuminateur de son supplice et de son
emprisonnement dans la Basse- Fosse.



Հոգեւոր Հովիւի Պատգամը

ԱՆԻՐԱԻ ԴՍՏԱԻՈՐԻ ԿԻՐԱԿԻ

«Պէտք է միշտ աղօթել եւ չձանձրանալ» (Ղուկ 18:1):

Մեծ Պահքի հինգերորդ Կիրակին նուիրուած է անձանձրոյթ աղօթքին: Աղօթքը կրօնի հոգին է, ուղնուծուծն ու կեանքը:

Աստուած Արարիչն է տիեզերքի եւ Տէրը կեանքի: Իսկ հոգեւոր կեանքը եւ աղօթքը գրեթէ նոյնն են, ինչպէս ընտանեկան կեանքը եւ սէրը:

Յիսուս կը պատմէ առակ մը անձանձրոյթ աղօթքի մասին:

«Քաղաքին մէջ կար դատաւոր մը, որ «ո՛չ Աստուծմէ կը վախնար եւ ո՛չ ալ մարդոցմէ կ'ամչնար»: Նոյն քաղաքին մէջ կար նաեւ աղքատ այրի կին մը, որ զոն գացած էր անիրաւութեան, ուստի ան գրեթէ ամէն օր կու գար դատաւորին դուռը՝ վերջինին քարացած խղճմտանքը շարժելու, բայց՝ անօգուտ: Դատաւորը գիտէր, որ խեղճ կինը ո՛չ կրնար կաշառք տալ եւ ո՛չ ալ դատարանի «ծախսերը» հոգալ եւ այդ պատճառով սպասաւորներուն կը հրամայէ դուրս քշել զայն: Սակայն կինը ունէր ուժեղ զէնք մը, որուն հետ անդադար կը ունեւորէր դատարանին եւ դատաւորին: Այդ յարատեւութիւնն էր:

Բարեբախտաբար, այս զէնք մըն է, որ ոչ մէկը մարդուն ձեռքէն չի կրնար առնել, եթէ ինք չյանձնէ: Կինը վճռած էր ձեռքէն չկորսնցնել զայն: Դատաւորը, որ լաւ գիտէր ամէն բան իր անձին համար օգտագործել, ի վերջոյ, ինքն իրեն ըսաւ. «թէեւ Աստուծմէ չեմ վախնար եւ մարդոցմէ ալ չեմ ամչնար, զոնէ օձիքս փորձանքէն ազատելու համար այրիին դատը տեսնեմ, որպէսզի այստեղ գալով՝ իր թախանձանքներով ինձի նեղութիւն չպատճառէ» (Ղուկ. 18:1-6):

Դատաւորը «այս աշխարհի որդի է», որ գիտէ իր գործերը անձնական շահերու համաձայն դասաւորել: Այս անիրաւ դատաւո-

րը իր խիղճը կորսնցուցած, նախապատուութիւնը կու տար «յուսալի դատերուն», որոնցմէ կրնար դրամ շահիլ: Անոր ձեռքին, դատավարութիւնը միջոց մըն էր դրամ շահելու եւ ո՛չ թէ արդարութիւնը իրականացնելու: Այս տեսակէտէն ան կը ներկայացնէ Աստուծոյ հակառակ կերպարը:

«Համաշխարհային հանճարներէն մէկը՝ Տանթէն, Կիրակի առաւօտ մը, պատարագի ամենասրբազան պահուն, երբ հաւատացեալները ծունկի եկած կ'աղօթէին, կը մնայ կանգնած, իր հակառակորդներուն ուշադրութիւնը դարձնելով իր վրայ: Արարողութենէն յետոյ անոնք կը մօտենան Կարտինալին եւ կ'ամբաստանեն Տանթէն իբրեւ սրբապիղծ ու անհաւատ:

-Ով Տանթէ, այս ինչ մեղք գործած ես, որ կը լսեմ քու մասիդ, կ'ըսէ Կարտինալը յուզուած շեշտով:

Ինձ ամբաստանողները իրաւունք ունին, Սրբազան Տէր, հոգիս այնքան վերացած էր աղօթքով, որ ուշադրութիւն չդարձուցի մարմինիս շարժումին, կ'երեւի անոնք սրտանց չէին աղօթեր, որ կրցան ինձի նայիլ ու հետեւիլ»:

19-րդ դարու Կ. Պոլսոյ Պատրիարք Պօղոս Ադրիանուպոլսէցին կ'ըսէ. «Ով որ իր խղճմտանքին դէմ կը գործէ, չի կրնար անոր խայթոցէն զերծ մնալ, խիղճի խայթը մահուրնէ ալ խիստ է. մահը մէկ անգամ կը մեռցնէ, իսկ խիղճի խայթը՝ ամէն ժամ...»:

Յիսուս մեր աղօթքին ուսուցիչն է: Ի՞նչ էր Անոր ամբողջ կեանքը, Անոր գործը, եթէ ոչ Աստուծոյ նուիրուած աղօթք մը: Աղօթքով սկսած իր գործը անապատին մէջ, աղօթքով շարունակեց եւ անով ալ աւարտեց Գէթսեմանիի պարտէզին մէջ: Ան որ աշխատանքէն ժամանակ չունէր նոյնիսկ հաց ուտելու, շատ յաճախ կ'առանձնանար աղօթելու համար, որպէսզի նոր ուժ ստացած՝ դարձեալ աշխատէր:

«Աղօթքը կրօնական կեանքի գլխաւոր մասն է: Չկայ կրօն, աստուածպաշտութիւն առանց աղօթքի»,- կ'ըսէ մեր դարուն լուսաւոր Կաթողիկոսներէն՝ երջանկայիշատակ Գարեգին Արք. Յովսէփեանցը եւ կը շարունակէ.

«Ինչպէս արցունքը կը թէթեւցնէ մեզ, երբ մեր սիրտին վրայ ծանրացած վիշտի խոստովանութիւնը կը կատարենք մեր սրտակից բարեկամին, նոյնը եւ աւելիով կը զգանք Աստուծոյ առջեւ, որ մեր Հայրն է եւ մեր իսկական բարեկամը: Ջերմեռանդ աղօթքի ազդեցութեան տակ մարդկային հոգին ինչպէս ամպ կը

լեցուի սիրոյ ցօղով, բանաւոր, ծարաւ տունկերու վրայ անձրեւելու համար: Աղօթքը սէր է...»:

Գրիգոր Աստուածաբանը այսպէս կ'արտայայտուի աղօթքի մասին. «Աղօթքը սիրտի գործ է եւ ոչ թէ շրթունքներու: Աստուած չի նայիր աղաչողի խօսքերուն, այլ՝ սիրտին, թէ ինչպէս կը պատրաստուի ընդունելու:

Եկեղեցւոյ մէջ կան մարդիկ, որոնք երկար կ'աղօթեն, բայց աղօթողի վարք չունին, եւ ի՞նչ զարմանալու բան կայ, եթէ այդպիսի մարդոց աղօթքները լսելի չըլլան»:

Առակի բացայայտ թելադրանքը «չձանձրանալն է»: Եթէ անաստուած ու անպատկառ դատաւորը տեղի կու տայ այրի կնոջ յարատեւ թախանձանքներուն, ապա Աստուած, որ բարութեան եւ արդարութեան մարմնացումն է, ի վերջոյ, չպիտի լսէ Իր ծառաներուն, որոնք գիշեր-ցերեկ Զինք կը կանչեն:

Առակին եզրակացնող մասին վերջին տողը կը կնքէ այդ Կիրակիին խորհուրդը՝ մատնանշելով այն գլխաւոր պայմանը, առանց որուն աղօթքը երբեք իր նպատակին չկրնար ծառայել: Այդ գլխաւոր պայմանը հաւատքն է:

Ամէն տեսակի աղօթք ընդունելի է, ուր ալ որ կատարուի: Սակայն աղօթքի հիմնական վայրը Եկեղեցին է, Աստուծոյ Տունը, ուր հաւատացեալները ներշնչումով ու հոգեւոր մթնոլորտի մէջ հաւաքական աղօթքով, շարականներու երգեցողութեամբ, Սուրբ Պատարագի հոգեպարար կատարումով, հաղորդակից կը դառնան անիմանալի խորհուրդին:

Մեր Եկեղեցւոյ Հայրերէն՝ Յովհան Մանդակունին իր ճառերէն մէկուն մէջ կ'ըսէ «Եթէ մէկը սիրով լեցուած աղօթէ, Աստուած անոր կ'ըսէ. «Ահա այստեղ եմ»: Երբ աղօթողը անկեղծ ու մաքուր արտասուքով աղօթէ, երկինքի դռները կը բացուին ու անոր ձայնը կը հասնի Աստուծոյ ականջներուն»:

Իմ ինդրանքս է, որ միշտ աղօթէք եւ մանաւանդ անձանձրոյթ կերպով աղօթէք: Աստուած կը լսէ ձեր ձայնը եւ աղօթքի միջոցով հոգիի թեթեւութիւն ու խաղաղութիւն կ'ունենաք: Ամէն:

Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ քահանայ Մարգարեան
Հոգեւոր հովիւ



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԱՂՕԹՔ

ԽՆԴՐԱՆՔՆԵՐՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ

Ով բարերար եւ բազումողորմ Աստուած, քու առջեւ իյնալով կ'աղաչենք մեր բոլոր սրտով, եւ գթութիւն կը խընդրենք քեզմէ, ինչպէս որ խոստացար քու ծառաներուդ եւ ըսիր թէ՝ «Ամէն ինչ որ խնդրենք չօրմէ հաւատքով՝ Որդւոյ անունով, պիտի տրուի ձեզ»:

Ով Տէր, նոյն խոստումդ շնորհէ հիմա քեզ հաւատացողներուս, եւ մեր խնդրուածքն ի բարին կատարէ, քանզի քեզ ապաւինած ենք: Եւ քու առատ ողորմութիւնովդ միւխթարէ զմեզ մեր այս կեանքին մէջ, եւ մեզ առաջնորդելով հասցուր երկնքի անճառ արքայութեանդ, փառաբանելու եւ պատւելու համար Ամենասուրբ Երրորդութեանդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

SUPPLICATION POUR L'EXAUCEMENT DES PRIÈRES

Nous approchant de Toi, Dieu bienfaiteur et très miséricordieux, nous te supplions de tout cœur et implorons ta bonté, suivant ce que tu as promis à tes serviteurs selon ta parole : "Tout ce que, dans la foi, vous demanderez au Père par le Nom du Fils, vous sera accordé". Maintenant aussi exauce-nous qui croyons en toi et accueille nos prières pour le bien, car nous avons confiance en toi. Par ton abondante miséricorde, reconforte-nous-en cette vie et faisons nous parvenir, sous ta conduite, à ton Royaume céleste indicible, pour que nous te glorifions et te bénissions, très sainte Trinité, maintenant et toujours et pour l'éternité de l'éternité. Amen.

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHURCH:

Merdikhanian Family, Dr. Arto Demirjian, Mr. Aram Minasyan \$100, Mr. Nurhan Pestemalcigil \$30.

THE LATE MISAK LEVON BALIAN:

Mrs. Sonia Kalpakdjian \$50

HOKEHANKISD:

THE LATE HAIG MISAKYAN:

Mrs. Meline Arsever \$50

THE LATE TAKUHI SIRINYAN:

Mr. Agop Sirinyan \$200, Mr. & Mrs. Martin & Kaline Ortaaslan - Yorgans \$150, Mr. & Mrs. Harutyun Seropian \$50, Mr. Gazer Yapar \$40, Mr. Levon Simonyan \$30, Mrs. Irma Basmajian \$25

THE LATE MAZLOUMIAN DORAMAJIAN FAMILIES:

Mr. & Mrs. Pierre & Alice Mazlounian, Mrs. Mary Doramajian \$50, Mrs. Georgette Manikian \$20

THE LATE ALBERT GHARIBIAN:

Mrs. Nadine Gharibian \$50

ՇԱԲԹՈՒԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Եթէ կ'ուզէք խորապէս ճանչնալ մէկուն, խօսեցէք անոր եւ խօսեցէք անոր հետ Աստուծոյ մասին, ու ան իր պաշտամունքի կամ անհաւատութեան միջոցով պիտի մատնէ իր հոգեւոր հասակը: Անաստուած ես, ըսել է զուրկ ես սրբութեան նուիրումէն, պարտականութեան զգացումէն, ըսել է վաղ թէ ուշ դուն պիտի դաւաճանես նմաններդ...

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

«Մրտիդ խաղաղութիւնը Աստուծոյ ձայնն է, իսկ սրտիդ դատարկութիւնը աշխարհի ձայնն է ...»

ՍԻՄԷՈՆ ԱԹՈՍԱՅԻ



ԽՈՐՀՈՒՐԴ ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ՊԱՇՏՈՆԻ

Այն հաւատացեալները, որոնք իրենց հանգուցեալ սիրելիին կամ հարազատին համար ՀՈԳԵՀԱՆԳԻՍՍ կը խնդրեն, պէտք է նկատի ունենալ թէ անհրաժեշտ է Սուրբ Պատարագի սկիզբէն ներկայ գտնուիլ եկեղեցի եւ մասնակցիլ աղօթքներուն. վասն զի, Սուրբ Պատարագի վերջաւորութեան կատարուելիք Հոգեհանգստեան Պաշտօնէն զատ, Պատարագիչ քահանան իր լուռ աղօթքներուն մէջ եւս կը յիշէ մեր բոլոր ննջեցեալներն ու յատկապէս անոնք՝ որոնց համար խնդրանք մատուցուած է:

CONSEIL POUR LES MESSES DE REQUIEM

Nous informons les personnes qui désirent faire un REQUIEM à l'intention de leur chers disparus, qu'elles doivent être présentes à l'église dès le début de la Sainte Messe puisque le père évoque le nom des défunts dans ses prières cachées pendant la Sainte Messe. Il est même préférable de donner le nom des défunts la veille en prévenant l'Église ou en contactant le Père.

ՅԱՒԱԿՅԱԳԻՐ



Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ
Հոգեւոր Հովին ու Ծխական Խորհուրդը
Ողբացեալ՝

ՏՕՔԹ. ԱՐՄԵՆ ԲԱՐՈՒՆԱԿԻ
(DR. ARMEN PARUNAK)

Մահուան տխուր առիթով
իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն
հանգուցեալի բոլոր պարագաներուն,
աղօթելով առ Աստուած, որ անոր հոգին
Երկնային Արքայութեան արժանանայ:

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**

ԿԻՐԱԿԻ, 31 Մարտ 2019



Հ.Բ.Ը.Մ.-ի Գործադիր Վարչություն, Յանձնախումբերուն
եւ Անդամներուն Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի՝

**Հ.Բ.Ը.Մ.-ի Նախագահ՝
ԼՈՒԻԶ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻՄՈՆԻ
(LOUISE MANOOGIAN SIMONE)**

Մահուան 40-ին առիթով

(Սուրճի սպասարկութիւն *Մարի Մանուկեան* սրահին մէջ)



Պր. Վահէ Զերեթեճեանի,

Տ. եւ Տիկ. Նաթալի եւ Փօլ Չամուրեանի եւ զաւակներուն,

Տ. եւ Տիկ. Սարօ եւ Զրիսթին Զերեթեճեանի եւ զակիկն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ կնոջ, մօր եւ մեծ մօր՝

**ԱՆԻ ԶԵՐԵՍԹԵՃԵԱՆԻ
(ANI KERESTECIYAN)**

Մահուան առաջին տարելիցին առիթով

(Սուրճի սպասարկութիւն *Վաչէ Յովսէփեան* սրահին մէջ):



Տիկ. Սիւզան Գրիգորեանի եւ զաւակներուն՝ Զրակի եւ
ՍԵՍԻԼԻ, եւ համայն Շէկեան եւ Գրիգորեան ընտանիքներու,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ հարազատին՝

ՎԱՉԷ ԳՕԶԱՃԵԱՆԻ (VATCHE KOZADJIAN)

Մահուան 10-րդ տարելիցին առիթով

Տ. ԵՆ ՏԻԿ. ՊՈՂՈՍ ԵՆ ՍԻՐՎԱՐԴ ՔԻՉԵԱՆԻ ԵՆ ՉԱՒԱԿՆԵՐՈՒՆ,
ԽՆՆՐԱՆՔՈՎ ԽՈԳԵԽԱՆՉԱՍՏԵԱՆ ՎԱՇՅՈՏՆ ՎԻՍԻ
ԿԱՏԱՐՈՒԻ ԻՐԵՆՑ ՍԻՐԵԳԵԱԼ ԵՂՔՕՐ ԵՆ ԽՕՐԵՂՔՕՐ՝
ԺԻՐԱՅՐ (ԺԻՐՕ)

ՔԻՇԵԱՆԻ

(JIRAIR (JIRO) KICHIAN)

Մահացած Լիբանան

Մահուան առաջին տարելիցին առիթով
ինչպես նաև՝

իրենց սիրեցեալ ծնողաց՝

ԳՐԻԳՈՐ ԵՄ ՎԻԹԹՕՐԻԱ

ՔԻՇԵԱՆՆԵՐՈՒ

(KRIKOR & VICTORIA KICHIAN)

ԵՄ

ԼԵՒՈՆ ԵՄ ՄԱՐԻ

ՏԵՔԻՐՄԵՆՃԵԱՆՆԵՐՈՒ

(LEVON & MARIE DEKIRMENJIAN)

Յոգիներուն ի հանգիստ

ինչպես նաև՝

ՔԻՇԵԱՆ ԵՄ ՏԵՔԻՐՄԵՆՃԵԱՆ

Գերդաստաններու համայն ննջեցելոց
նոգիներուն ի հանգիստ



Տ. ԵՆ ՏԻԿ. ՉԱՐԵԽ ԵՆ ԷԼՄԱՍ ՔԻՍԱՅԻ ԵՆ ՉԱՒԱԿՆԵՐՈՒՆ,
ՊՐ. ԽԱՂԱՏՈՒՐ ԹՕՐԻ ԵՆ ՉԱՒԿՆԵՐՈՒՆ,

ՊՐ. ՄՈՒՐԱՏ ԹՕՐԻ,

ԽՆՆՐԱՆՔՈՎ ԽՈԳԵԽԱՆՉԱՍՏԵԱՆ ՎԱՇՅՈՏՆ ՎԻՍԻ
ԿԱՏԱՐՈՒԻ ԻՐԵՆՑ ՍԻՐԵԳԵԱԼ ՎՕՐ ԵՆ ՎԵՃ ՎՕՐ՝

ՎԵՐՔԻՆ ԵԱՆՃԻ ԹՕՐԻ

(VERKIN YANCI TOR)

Մահուան 40-ին առիթով



**«ՈՂՋՈՅՆ»-Ի ԲԱՆԱԶԵԻԵՐ
SALUT DE PAIX**

Յարգելի հաւատացեալներ,
Սուրբ Պատարագի ընթացքին «Սուրբ Ողջոյն» կը
փոխանակենք:

Այդ առթիւ, «Ողջոյն» տուողը պէտք է ըսէ.-
Pendant la Sainte Liturgie, on échange le baiser de la paix.

Celui qui salue dit:

1) Յունուարի 5-էն մինչեւ 13-ը:

Du 5 au 13 Janvier

Ծնունդի ութ օրերուն.-

«ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ»

«Le Christ est né et s'est révélé»

2) Զատիկէն մինչեւ Համբարձում.-

À partir de Pâques jusqu'à l'Ascension.-

«ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱԻ Ի ՄԵՌԵԼՈՑ»

«Le Christ est ressuscité d'entre les morts»

3) Միւս օրերուն.-

Les autres jours.-

«ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԷՁ ՄԵՐ ՅԱՅՏՆԵՑԱԻ»

«Le Christ s'est révélé parmi nous»

«Ողջոյն» ստացողը պէտք է պատասխանէ .-

Celui qui reçoit le salut réponds:

1- Ծնունդի ութ օրերուն.-

«ՕՐՀՆԵԱԼ Է ԾՆՈՒՆԴՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Naissance du Christ»

2- Զատիկէն մինչեւ Համբարձում.-

«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Résurrection du Christ»

3- Միւս օրերուն.-

«ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ»

«Soit bénie la Révélation du Christ»



ՆԻՍՏ ՈՒ ԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՋ

Ամենուն յատուկ ուշադրութեան եւ նկատառութեան կը հր-րաւիրենք հետեւեալ պարագաները.

1. Հաւատացեալները պարտին խոստովանիլ՝ Ս. Հաղորդու-թիւն ստանալէ առաջ:
2. Կանայք երբ հաղորդուելու կը մերձենան, անհրաժեշտ է որ իրենց գլուխը ծածկեն քողով կամ գլխարկով:
3. Երբ Եկեղեցի կ'երթանք մասնակցելու Ս. Պատարագին կամ այլ արարողութիւններու, պարտինք վայելուչ եւ լուրջ զգեստ-ներ հագուիլ, ուշադիր ըլլալ մեր նիստ ու կացին, զգուշանալ ողջագուրումներէ եւ իրարու հետ խօսակցելէ:
4. Երբ Եկեղեցին ենք ու կը սպասենք մասնակցելու արար-ողութեան մը կամ արարողութեան աւարտին ենք եւ կը պատ-րաստուինք դուրս գալ Եկեղեցիէն, պետք է խուսափիլ աղմկելէ կամ իրար հետ խօսակցելէ : Եկեղեցին ա-դօթքի Սուրբ վայր է: Այնտեղ՝ շարունակ եւ միշտ ԼՈՒՌԹԻՒՆ եւ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ պետք է տիրէ:

OBSERVANCES PARTICULIÈRES À RESPECTER

Nous attirons tout particulièrement Votre attention sur les points suivants:

- 1) Les fidèles doivent se confesser avant de recevoir la Sainte Communion.
- 2) Les femmes doivent avoir la tête couverte pour communier.
- 3) Chaque fois que nous entrons dans l'Eglise pour assister à une cérémonie religieuse, nous devons être attentifs à la dignité de notre tenue, à la célébration en cours et éviter de saluer ostensiblement nos proches ou nos amis dans ce lieu saint.
- 4) Il est rappelé que l'Eglise est un lieu Saint où doivent toujours régner le calme et la sérénité.

Il est instamment demandé aux fidèles qui désirent se saluer, avant ou après les cérémonies, de le faire à l'extérieur de ce lieu de prières.

Website: www.saintgregory.ca

Սիրելի հաւատացեալներ,
Հաճոյքով կը տեղեկացնենք Ձեզի,
թէ յետայսու կարելի է այցելել Եկեղեցւոյ
Կայքէջը - Website www.saintgregory.ca
Ուր կարելի է գտնել Եկեղեցւոյ յայտարարութիւնները
եւ ձեռնարկները:

Կատարել Ձեր սրտաբուխ նուիրատուութիւնները
եւ օգտուիլ ընձեռուած այլ կարելիութիւններէն
համացանցային դրութեամբ:
Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան համար:

Chers Paroissiens,
Nous avons le plaisir de vous informer
de la récente mise à jour de notre
Site: www.saintgregory.ca
Ou vous trouvez les dernières nouvelles des activités
et des événements.
Nous remercions de votre soutien!

Dear Parishioners,
We are glad to inform you our Church's newly developed
Website: www.saintgregory.ca
where you will read the latest church news and events,
meanwhile you can also make your online church donations
and benefiting from other possibilities of our Website.
Thank you for your support!

Ուշադրութիւն Մեր Սիրելի Հաւատացեալներուն

Եթէ ունիք հասցէի, հեռաձայնի կամ e-mail-ի փոփոխութիւն, հաճեցէ ձեր նոր տուեալները փոխանցել Եկեղեցւոյ քարտուղարութեան (514) 279-3066, մեր հաղորդակցութիւնը կարենալ պահելու համար կանոնաւոր, շարունակական եւ այժմեական ընթացքի մէջ:

Շնորհակալութիւն ձեր գործակցութեան համար:

Ծիական Խորհուրդ

Attention to our beloved parishioners

If you have changes in your address, e-mail or phone numbers please feel free to convey your new data to the Church office at (514) 279-3066, to maintain our communication in a regular, continuous, and up-to-date course.

Thank you for your cooperation.



ՀՍԿՈՒՄԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամեն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին

Մարտ 6 – Ապրիլ 18

2019

Մարտ 6 – Զարոգիչ՝ Զոգշ. Զայր Վարդան Վրդ. Թաշճեան

Պահոց Ընթրիք – Տ. եւ Տիկ. Ասպետ եւ Միրնա Պաճաքեան

Մարտ 13 – Զարոգիչ՝ Արժ. Տ. Տրդատ Զինյ. Թաշճեան

Պահոց Ընթրիք – Թէքէեան Սշակութային Միութիւն

Մարտ 20 – Զարոգիչ՝ Արժ. Տ. Կոմիտաս Զինյ.

Միրզախանեան

Հոգեւոր Հովիւ- Լաւալի Ս. Խաչ Դայց. Առաք Եկեղեցւոյ

Պահոց Ընթրիք – Տիկ. Սօնիա Գալայճեան եւ Ընտանիք

Մարտ 27 – Զարոգիչ՝ Գերշ. Տ. Աբգար Եպս.

Յովակիմեան

Առաջնորդ Գանատահայոց Թեմի

Պահոց Ընթրիք – Փառանձեմ Գեորգեան, Թամար եւ

Շողիկ Գրիգորեան

Ապրիլ 3 – Զարոգիչ՝ Գերյ. Զ. Գեորգ Ծ. Վրդ. Չապարեան

Ժողովրդապետ Դայ Կաթողիկէ Դամայնքի

Պահոց Ընթրիք – Տիկ. Ռոզ Տիգրանեան

Ապրիլ 10 – Զարոգիչ՝ Պատուելի Յովհաննէս Սվաճեան

Հոգեւոր Հովիւ - Դայ Աւետարանական Եկեղեցւոյ

Պահոց Ընթրիք – Տիկ. Թագուհի Օտապաշեան եւ Ընտանիք

Ապրիլ 18 – Աւագ Դիմզաբթի

Աւագ Դիմզաբթի Ընթրիք – Տիկնանց Յանձնախումբ

«Մարի Մանուկեան» սրահին մէջ

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 /

Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com



Ս. Գրիգոր Լուսավորչի
Պատանեկան Երաժշտական Խումբ



Jeunesse
Musicale St-Grégoire d'Outremont

Պատանեկան Երգչախումբի փորձերը տեղի
կ'ունենան

Կիրակի օրերը կէսօրէ ետք, ժամը 1:30-ին:

Les répétitions de la chorale des Jeunes ont lieu
Les dimanches à 13:30 heures

Ցաւելէալ մանրամասնութեանց համար կապ
հաստատել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ:

Pour en savoir plus, veuillez contacter le secrétariat de
l'église.

Արձանագրութեան տարիք 7-15 տարեկան

Âge d'inscription 7 à 15 ans

- Փոքրերը հնարաւորութիւն պիտի ունենան սորվելու հիմնական երաժշտութեան նոթաները, միաժամանակ պիտի մշակուին անոնց երաժշտական գիտելիքներն ու ճաշակը:
- Durant les rencontres hebdomadaires, les enfants auront l'opportunité d'apprendre les bases de la notation musicale et le solfège.
- Ուսումնասիրուած ծրագիրը պիտի բաղկանայ ժամանակակից, դասական եւ կրօնական երաժշտական կտորներէ, Ֆրանսերէն եւ Հայերէն լեզուներով:
- Le répertoire étudié consistera de pièces musicales contemporaines, classiques et religieuses, de langue française et arménienne.



Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ
Curé & Conseil Paroissial

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/

Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՆՈՍՏՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԾԱՂԿԱԶԱՐԴ
ԵՒ
ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՕՐ
ԿԻՐԱԿԻ, 14 ԱՊՐԻԼ 2019**

Առաւօտեան ժամերգութիւն՝ ժամը 9:30
Սբ. Պատարագ՝ ժամը 10:30

Յաւարտ Սբ. Պատարագի պիտի կատարուի
Մանուկներու Օրհնութեան կարգ

Դռնբացէք՝ ժամը 12:30

ԱՄԱՆԴԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Հիւրընկալութեամբ՝
«ԿԱՄԱՐ» Երիտասարդական Միութեան
«Մարի Մանուկեան» սրահին մէջ:

Մուտքի անւեր \$ 20

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
stgregorychurch@gmail.com

ԵԿԷՔ ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Եկեղեցոյս պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,

Միրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգևորականաց հոգաբարձիք
- Սկիհի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Շուրջատներ
- Մեծ Պահքի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մտուր
- Եկեղեցոյ տօնածառ
- Ճրագալոյցի եւ Տեսօրնդատօջի համար նախատեսուած դուրսի մուկեր
- Տրորինէքի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր կարմիր եւ սև

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակից դառնալ Եկեղեցոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել Եկեղեցոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

«Այս երկրի մէջ ցանկ՝ քու հացդ, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտուղ տուած գտնես»:

«Հոգևոր հայելի»

Կանխապայտ շնորհակալութեամբ,
Հոգևոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ



ԵԿԷ՛Ք ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Սիրելի հաւատացեալներ,

Եկեղեցւոյ Սուրբ Սեղանը, որ պատարագեալ Փրկիչի իջեւանն է, ամէն Կիրակի եւ յատկապէս տաղաւար տօներուն գեղեցիկ եւ պայծառ պահելու համար կոչ կ'ուղենք Ձեզի, որ Ձեր գործօն եւ արդիւնաւետ մասնակցութեամբ կամ ծաղիկներով զարդարել Տիրոջ Ս. Սեղանը, զորս աղբիւրն է Կենաց եւ Իմաստութեան:

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ կամ ծաղիկներու մատուցմամբ զարդարուն պահեն Տիրոջ Ս. Խորանը, կրնան կապ պահել Եկեղեցւոյ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

Հովիւ

եւ

Ծիական Խորհուրդ



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Գրիգոր Լուսաուրիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցույ հովանու ներքոյ գործող Կիրակօրեայ Վարժարանը, ներշնչուելով նոր սերունդի հայեցի դաստիարակութեան անհրաժեշտութենէն՝ անմիջական կարիքն ունի Արեւելահայերէն եւ Արեւմտահայերէն լեզուներ դաստաներոջ մասնագէտներու, սիրայօժար սկզբունքով:



- Դասընթացքները պիտի կատարուին Կիրակի օրերը ժամը 11-էն սկսեալ:
- Հետաքրքրուողներէն կը խնդրենք դիմել Եկեղեցույ գրասենեակ (514) 279-3066 թիւին:

կամ

- Արեւմտահայերէնի պատասխանատու՝ Շողիկ Գուշաքճրեանին (514) 690-2890:
Արեւելահայերէնի պատասխանատու՝ Ալինա Պեժանեանին (438) 889-8167:

Հոգեւոր Հովիւ
Եւ
Մի. Խորհուրդ



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԿԱՐԺԱՐԱՆ

6 -14 տարեկան երեխաներու համար

École de dimanche Pour les enfants de 6 à 14 ans

Հաճելի եւ ընկերային մթնոլորտ

- Սաղմոսներ եւ երգեր
 - Հայերէն լեզու
- Հաճելի Պատմութեան Եւ անակնկալներ
- Չուարճալի եւ հետաքրքրաշարժ յաջորդական պտոյտներ

Կիրակնօրեայ Կարծարանը տեղի կ'ունենայ
ամէն Կիրակի առաւօտեան ժամը 11-ին:

Արձանագրութեան եւ մանրամասնութեան համար
հեռաձայնել՝ Եկեղեցոյ

գրասենեակ (514) 279-3066

Տէր Դաւիթ Զիյ, Սարգստեան



École de dimanche
Pour les enfants de 6 à 14 ans
Dans une ambiance chaleureuse et amicale on
Offre aux enfants :

- Initiation aux Psaumes et chants
- **Connaissance de la langue arménienne**
- Histoires instructives et divertissements
- Sorties récréatives et successives

Chaque dimanche à 11 heures

Pour plus amples informations et inscription
Contacter le secrétariat de l'Église (514) 279-3066
Père David Margaryan

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

E-Mail: stgregorychurch@gmail.com, www.saintgregory.ca

Facebook : Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Հայց. Առաքելական
Ս. Գրիգոր Լուսավորիչ
Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի**

Դաշնակի Դասընթացքներ

Փոքրերու եւ չափասերու համար
Սկզբնակներու եւ երաժշտութեան հետեւողներու համար
Անհատական դասընթացքներ պիտի կատարուին՝
Ամեն Կիրակի ժամը 11-էն սկսեալ ,
արհեստավարժ եւ փորձառու դաշնակահարուհի՝

ԶԻՆԱՅՏԱ ՎԱՐՈՍԵԱՆԻ հետ:

Շրջանաւարտ երաժշտագետ McGill համալսարանէն
եւ արժանացած Զեպեցի Ոսկեայ Մետալին
երաժշտական ծիրէն ներս:

Յաւելեալ մանրամասնութիւններու համար
կապ հաստատել Եկեղեցւոյ գրասենեակ՝
հեռ. (514) 279-3066 / stgregorychurch@gmail.com
կամ ուսուցչուհի՝ Զինայտա Վարոսեանի հետ
հեռ. (514) 945-586 zinaida.varosian@mcgill.ca

Piano lessons with a concert pianist

All ages – Children / Adults

For beginners & Music trainees

Individual courses will be held every Sunday at 11:00 am

Many years of experience

Theory & harmony

Preparation for Examen and competitions.

Master of Music in Performance from Mc Gill University

Quebec Gold Medalist

For further information

contact to the church office

at (514) 279-3066 / stgregorychurch@gmail.com

or Teacher- Zinaida Varosian

at (514)945- 5816 / zinaida.varosian@mcgill.ca

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2



la collecte

blood donor clinic

**16^e
ÉDITION**

**LA COLLECTIVITÉ
ARMÉNIENNE**



Diocèse Canadien de la Sainte Église Apostolique Arménienne

Armenian Holy Apostolic Church Canadian Diocese

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ Գանատահայոց Թեմ

**Samedi 27 avril
10 h à 17 h**

**Saturday, April 27
10 a.m. to 5 p.m.**

globule
CENTRE DES DONNEURS DE SANG

Centre Laval


1600, boul. Le Corbusier
Entrée porte # 4



HÉMA-QUÉBEC
Au-delà du sang!

GIVE BLOOD. GIVE LIFE.

DONNEZ DU SANG. DONNEZ LA VIE.



ԱՐԱՐԱՏ ՃԱՄԲԱՐ 2019

ՇԱԲԱԹ, Օգոստոս 10--Օգոստոս 17, 2019

Մասնակցի շաբթուայ մը բացօդայ ճամբարին, ուր ինզիսրդ պիտի զգաս Հայկական մթնոլորտի մէջ եւ ուր պիտի հաստատես երկարատե բարակամութիւններ եւ ուրիշ ակամայ պիտի բաժնուիս անտրանայի



Դիմումագիրերը կարելի է հայթայթել www.campararat.ca կայքէջէն:
Հաճեցէք դիմումագիրերը դրկել եւ վճարումները կատարել մինչեւ Ապրիլ 1, 2019
Բւրաբանչիւր մասնակցողի համար վճարել \$555.00:
Տեղերը սահմանափակ են, հաճեցէք ձեր դիմումը չուշացնել

Ցաւելեալ տեղեկութեան համար հաճեցէք մեզ հետ կապ հաստատել campararat@gmail.com
հասցեով, կամ հեռաձայնել Անի Ալթունեանին 905-891-8216, կամ դիմել ձեր ծովիսի Հոգեւոր
Հովիսին եւ Օխական Խորհուրդին

Արարատ ճամբարին առաքելութիւնն է Գնատահայ երիտասարդին տրամադրել այնպիսի գուարթ, ապահով եւ
դաստիարակչական միջավայր մը, ուր ան փորձառական հմտութիւն ունենայ Քրիստոնէական հաւանքին, իր Հայկական
պատկանելիութեան, ինչպէս նաեւ կատարելագործել իր ընկերութեան, եղելեցիին ու համայնքին օգնելու յատկութիւնները:

ՊՏՈՅՑ ԴԷՊԻ ԹՈՒՐԻՔԻՈՅ ՄԷՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐ




TRIP TO THE ARMENIAN HERITAGE SITES IN TURKEY



MAY 7, 2019  MAY 20, 2019



The Women's Guild Central Council,
with the blessings of
H.G. Bishop Abgar Hovakimyan,
Primate of the Armenian Diocese of Canada,
organizes a



TRIP TO THE ARMENIAN HERITAGE SITES IN TURKEY



(Istanbul, Rodosto (Tekirdag), Bursa, Efes,
Cappadocia, Kayseri, Adana, Musa Dag).



Cost \$2,200 USD (double occupancy)
\$2,600 USD (single occupancy)



Included: 13 nights accommodation at nice
hotels, Breakfasts & dinners,
professional guides (Armenian & English),
Bosphorus by boat,
transportation with high end buses,
domestic flight.



Not included: international airfare, lunches,
drinks, balloon tour in Cappadocia.



Places are limited !
Deposit \$500 by March 7.
Full payment by March 31.



For details, please contact the Diocese at (514) 276-9479 or contact@armenianchurch.ca, or
WGCC Chair, Mrs. Anita Ohanessian at (647) 984-8568 or anita-ot@hotmail.com, or
Mrs. Avda Afarian at (416) 885-0303 or avdaafarian@gmail.com





ՀԱՅՑ. ԱՌԱՋ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Address : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2